բժշկագիր

279

Ձեռագիր
133

2011

Ի Նպաստ Հիմնելի Հայ Երաժշտանոցի

# Ձեռաց Տետրակ

# Հայ Գեղջուկ Համերգի

որ

Ղեկավարութեամբ

**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ**

և

*Սիրայօժար մասնակցութեամբ իր 300 երկսեռ երգիչներու*

*Կիրակի, Մարտ 20/2 Ապրիլ 1911, կէս օրէ ետք ՃՇԴԱԳՈՅՆ ժամը 2 (ք. ե.)*

Բերա Իւնիօն Ֆրանսէզի Սրահ

Խմբագրեց՝ համառօտ ճեռածութեամբ

**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ**

*Կ. Պոլիս*

Ն. ՏՊ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

184
68

84
-68
133

Ի ՆՊԱՍՏ ՀԻՄՆԵԼԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻ

Ձեռաց Տետրակ

# ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿ ՀԱՄԵՐԳԻ

որ

Ղեկավարութեամբ

**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ**

եւ

*Սիրայօժար մասնակցութեամբ իր 300 երկսեռ երգիչներու*

*Կիրակի, Մարտ 20/2 Ապրիլ 1911, կէս օրէ ետք*
*ՃՇԴԱԳՈՅՆ ժամը 2 (ը. ե.)*

Բերա Իւնիօն Ֆրանսէզի Սրահ

Խմբագրեց՝ համառօտ ներածութեամբ
**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ**

*Կ. Պոլիս*

8099
2004

26386-Աչ-Հ.

Արտատպելն արգիլեալ է

Կոմիտաս Վարդապետի ստորագրութիւնը չը կրող օրինակները անվաւեր են:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

133-2014
Կ132
(4641-56)

## ԵՐԳՈՒ ՁԵՒՔ

Հայ գեղջուկը բնազդաբար բաժնած է իր երգական երաժշտութիւնը երեք տեսակի՝

**Ա. Բառ ասել,**

**Բ. Խաղ ասել** եւ

**Գ. Խաղ կանչել։**

**Ա. Բառ ասել** կը նշանակէ բառ առ բառ ասել՝ հատիկ հատիկ հնչել՝ եղանակաւոր պատմել. համազօր հինգ *վէպ ասել* իմաստին: Յիրաւի. այս կարգի երաժշտական գրականութեան նիւթն է, բացառապէս, հին եւ նոր ժողովրդական անգիր վիպասանութիւնը: Որովհետեւ վէպերը կը պատմուին գեղջուկի հանգստեան օրերուն՝ ձմեռուան երկար գիշերներուն եւ խրճիթներու մէջ նստած, ուստի *նստմանց* եւս կասեն: *Նստմանց* վէպերը *բառ ասելու* պահուն ունկնդիրներն, առ հասարակ, բոլորովին խորհրդաւոր լռութիւն կը պահեն, ջերմեռանդ հաւատացեալի տեսքը կ'առնեն եւ ակնապիշ կ'ունկնդրեն գեղջուկ գուսանի հնչիւն բերանով խօսող անցեալն ու ներկան:

Այս ձեւը կը պարունակէ հայ գեղջուկ երաժշտութեան տարերքը՝ բառերի հնչական ելեւէջը՝ *հիմնա-*

ձայն, շեշտ եւ բութ, եւ տաղաչափութեան հիմունքնե-րը՝ վանկերի ժամանակը՝ *սուղ* եւ *երկար*: *Խաղ ասելու* ելեւէջն անկայուն է, իսկ ժամանակը՝ հաստատուն:

Բ. **Խաղ ասել** կը նշանակէ՝ խաղաւոր, նուա-ւոր, նոյն ասել՝ երգել. *խաղ ասելու* եղանակաւորումն է: Այս ձեւով կ'երգուին գրեթէ բոլոր տեսակ գեղջուկ երգերը եւ մեներգի բնոյթ չունեցող վիպերգերը: *Խաղ ասելու* ձայնածաւալն ու տաղաչափութիւնը հարուստ է:

Գ. **Խաղ կանչել** կը նշանակէ՝ խաղաւոր, նուաւոր, նոյն կանչել՝ բարձրաձայն ու զարդարուն գեղգեղելով երգել: *Խաղ կանչելը խաղ ասելուն* ըն-դարձակ ձեւն է: Այս ձեւով կ'երգուին, իբր մեծի մասին, մեներգերը, որոց ձայնելեւէջներն առաւել ընդարձակ սահման ու պտոյտներ ունին, որպէս դիւցազներգու-թիւնները, վիպերգութիւնները, անտունիները, ողբերը եւայլն:

Հայ եղանակներն ունին նոյն, ինքնատիպ տրո-հումներ եւ շեշտաւորումներ, որոնք, չափածոյ լինելով հանդերձ, ազատ ու անկախ են, հակառակ արեւմտեան երաժշտութեան, ուր յանգն ու շեշտը փոխադարձաբար կաշկանդուած են: Հայկական երաժշտական յանգն ու շեշտը միասին կը կենդանացնեն մի ազգային ձայնական տեսարան, ուր առաջինը կը գծագրէ հոգու ու սրտի յուզումներու տեւողութիւնները՝ համաչափ ու յանգաւոր տրոհումներով. իսկ երկրորդը կը նկարէ՝ թափն ու եռանդը՝ բազմատեսակ ու պերճ ձայնե-րանգներով:

Հայ գեղջուկ երգերն ունին այսպիսի ձևեր.

ա. **Տուն երգ,** որ կրկնակ չունի.

բ. **Տուն երգ** *եւ կրկնակ՝ փոխ առ փոխ* երգելի.

գ. **Տուն երգ** *եւ կրկնակ՝ տող առ տող ու փոխ առ փոխ* երգելի եւ

դ. **Երկու զանազան երգեր,** որոնք հարց ու պատասխան են, կամ որ եւ է ներքին համաձայնով են կապուած, *առաջին, երկրորդ եւ երրորդ ձեւերով փոխադարձաբար նուագելով* երգելի:

Տուն երգը կ՚ընդգրկէ եղանակի հիմնականը, իսկ կրկնակը՝ ճիւղականը, որ գեղջուկ երաժշտութեան ոգին է. ուստի տուն երգի եղանակն անոյշ է, անպաճոյճ ու պարզ է՝ նման խօսելուն. իսկ կրկնակինը՝ ոճաւոր, զարդարուն եւ շարժուն:

Տուն երգի բանաստեղծութիւնը համեմուած է պատկերաւոր համեմատութիւններով. իսկ կրկնակինը՝ զոյնզգոյն բացագանչութիւններով կամ կարճ ու կտրուկ նկարագրութիւններով: Առաջինը կը բացատրէ միտքը, երկրորդը կը թարգմանէ զգացումները:

Գեղջուկը բնութեան հարազատ զաւակն է. ուստի ճաշակել է բնութիւնը բովանդակ հոգւով ու սրտով: Իր երգերու մէջ բնութիւնը կը խօսի. որովհետեւ բնութիւնն է նախ իր մէջ խօսած: Իր սրտի մէջ բընութեան ձայնը կը յուզուի, վասն զի ինքն իսկ բընութեան ալիքներու վրայ կը դեգերէ: Իր երգերն իր կեանքն են, զի իր ամբողջ կեանքը իր երգերու մէջն

է ներշնչած: Վերջապէս, գեղջուկ երգերը տեսակ տեսակ ասուն հայելիներ են, որոնք զատ զատ, իրենց ծնունդ առած վայրերուն դիրքը, կլիման, բնութիւնը եւ կեանքը կանդրադարձնեն:

**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ**

1911, Մարտ 20/2 Ապրիլ, Կ. ՊՈԼԻՍ

ԾԱՆՕԹ.— **Կոմիտաս Վարդապետ** *նախ պէտք է համառօտակի վերլուծէ մէն մի երգի կազմութիւնը՝ բանաստեղծութիւնը, եղանակը եւ դաշնաւորումը եւ ապա երգուելու են :*

*Տետրակիս երգերու մեծ մասն առնուած է* **Կոմիտաս Վարդապետի** *եւ* **Մանուկ Աբեղեանի** *խմբագրած ժողովրդական* “ Հազար ու մի խաղ ” *երգարաններու Ա. եւ Բ. յիսնեակներէն:* ( Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1904 եւ 1905 ) :

## ՄԱՍՆ Ա.

## 1.

# ԿԱԼԵՐԳ

Հօ՛, ռօ՛լ, օ՛, լօ՛, լօ՛, լօ՛:
*Ա՛րի, ա՛րի, քե՛ մատաղ.*
Հօ՛, ե՛զր, ջա՛ն,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛:

*Հա՛, կա՛լ արա, մա՛ն արա.*
Հօ՛, ե՛զր, ջա՛ն,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛:

*Հա՛, կալը գարման արա.*
Հօ՛, ե՛զր, ջա՛ն,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛:

*Ցորենն ինձ, գարմանը քեզ.*
Հօ՛, ե՛զր, ջա՛ն,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛:

*Հաչանը գարման արա,*
*Հաչանը գարման արա.*
Պուէ՛րէ, հօ՛մ, պուէ՛,
Պուէ՛րէ, հօ՛մ, պուէ՛,
Պուէ՛րէ, ջա՛ն:

## ՍԱՅԼԵՐԳ ՂԱՋԱԽ ԳԱՒԱՌԻ

*Հօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն,*
*Հօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն,*
*Հօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն, հօ՜.*
Հօ՛լ էլ, հօ՛լ էլ, հօ՛լ էլ, հօ՛լ է՛լ.
Հօ՜, ջա՛ն, հօ՜:
*Թօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն,*
*Թօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն,*
*Թօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն, հօ՜.*
Հօ՛լ էլ, հօ՛լ էլ, հօ՛լ էլ, հօ՛լ է՛լ,
Հօ՜, ջա՛ն, հօ՜:

## ՍԱՅԼԵՐԳ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

*Հօ՛լ արա, ե՛զօ՛,*
Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն, հօ՛.
*Թօ՛լ արա, ե՛զօ՛,*
Ջա՛ն, ա՛ղբէր.
    Դէ՛, սի՛րուն, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ,
    Դէ՛, ծի՛րան, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ,
    Դէ՛, տո՛կան, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ, հօ՛:

*Հօ՛լ արա ակը,*
Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն, հօ՛.
*Թօ՛լ արա ակլի;*
Ջա՛ն, ա՛ղբէր.
    Դէ՛, սի՛րուն, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ,
    Դէ՛, ծի՛րան, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ,
    Դէ՛, տո՛կան, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ, հօ՛:

## Հ. Ա.

## ՊԱՐԵՐԳ.

Հօ՛յ, նա՛զան իմ, նա՛զան իմ,
Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զան իմ,
Նա՛զան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար:
*Գարնան սիրուն ծաղիկ ես,*
Հօ՛յ, նա՛զան իմ, նա՛զան իմ,
*Ինձ համար աղունիկ ես.*
Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զան իմ,
*Գըլխիս վըրով պըտոյտ տուր,*
Հօ՛յ, նա՛զան իմ, նա՛զան իմ,
*Նախշուն թև թիթեռնիկ ես:*
Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զան իմ:
*Ճամբա՛յ տուէք՝ առաջ գամ,*
*Սիրած եարիս բարեւ տամ.*
*Ուխտ եմ արել, որ առնեմ,*
*Թող տեսնի աշխարհն ապամ:*
*Սա՛րեր, ձո՛րեր, յետ կացէ՛ք,*
*Իմ եարի ճամբէն քաշուէ՛ք.*
*Երբ եարի հետ խօսելիս,*
*Ականջ արէք, խաղացէք:*

## 2. Բ.

## ՊԱՐԵՐԳ

Փափուրի, ջա՛ն,
Մրտայ պըլպուլի բաղը,
Փափուրի, ջա՛ն,
Երգեցի անուշ տաղը:
*Լուսնակը շող ա գցել,*
*Իմ եարը քող ա գցել:*
Փափուրի, եայլն:

*Բարակ քամին տալիս ա,*
*Ալ քողը դող ա գցել:*
Փափուրի, եայլն,

*Ծամերը ունիս ծիրանի,*
*Քամին տայ թել թել անի.*
*Սիրուն աչերդ եա՛րօ,*
*Խելք ու միտքս կը տանի:*
Փափուրի, եայլն:

## 3.

## ՄՈԿԱՑ ՄԻՐԶԱ

### ԴԻԻՑԱԶՆԵՐԳ

*Օրն էր ուրբաթ,*
*Լոյս ի շաբաթ,*
*Գեաշտ էրիր ենք Մալաքեաւէն.*
*Թըզթիկ մ'եկաւ Զըզիրու քաղքէն,*
*Առին, բերին Մալաքեաւէն,*
*Տուին ի ձեռ Մոկաց Միրզէն,*
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:
*Առեց, կարդաց քաղցրիկ լեզուէն,*
*Էրաւ մաղզէն,*
*Ծըլեց աչքեր, կախեց չանէն,*
*Բաղուաւ գոյն կամիր երեսէն:*
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:
*Կանչեց, տաաց իւր մըշակին,—*
*Դու՛ս քաշի բոզ-բեդաւին,*
*Վըրայ դըրէք թամքը սադաֆին,*
*Սաֆար կերթամ չոլր Զըզիրէն:*
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն: Եւայլն:

## 4. Ա.

# ՀԱՐՍՆԵՐԳ

*Առաւօտուն բարի լուս,*
*Աստուած պահի ամենուս,*
*Թ'ող դուս գայ թըշնամու լուս,*
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ.
*Թ'ող դուս գայ թըշնամու լուս,*
Լո՛րիկ, լո՛րիմ, լո՛րիկ, սի՛րուն լորիկ,
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛ր իմ, լու՛ս լուրիկ:
*Հազար երնէկ էն աւուր՝*
*Տաւուլ զուռնա չալեցուցին,*
*Կանաչ կարմիր հագեցուցին,*
*Տարան ժամը կայնեցուցին,*
*Աւետարան կարդացուցին,*
*Ձեռք ձեռքին տըւեցուցին,*
Տու՛յ, տու՛յ, տու՛յ, տու՛յ . . .
Լո՛րիմ, լո՛րիկ, սի՛րուն լորիկ,
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛ր իմ, լու՛ս լորիկ:
*Առաւօտ բարի լուսուն,*
*Քո հայան հարիր ջանուն,*
*Համբ'ի, գն'ի մըր քուրուն:*

## 4. Բ.

## ՊԱՐԵՐԳ

*Արեւը կայնէ կէս օր ,*
Դէ՛, ֆէ՛լէ, դէ՛, ֆէ՛լէ, եա՛րօ, ջա՛ն.

*Իմ եարը կուգայ էս օր .*
Դէ՛, ֆէ՛լէ, դէ՛, ֆէ՛լէ, եա՛րօ, ջա՛ն.

*Իմ եարի գալած ճամբէն ,*
Դէ՛, ֆէ՛լէ, դէ՛, ֆէ՛լէ, եա՛րօ, ջա՛ն,

*Կը ցանեմ կարմիր մասուր :*
Դէ՛, ֆէ՛լէ, դէ՛, ֆէ՛լէ, եա՛րօ, ջա՛ն:

## 5. Ա.

## ԾԱՂՐԵՐԳ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ

### ԿԱԹ ԿԹԵԼՈՒ ԵՐԳ.

*Հինգ էծ ունիմ ուր էծերով,*
Իլիլի, տիլիլի·

*Կաթ կը կըթեմ պըղընձներով,*
Իլիլի, տիլիլի·

*Սեր կը չափեմ կալի չափով,*
Իլիլի, տիլիլի·

*Եղ կը հանեմ լըւի տըկով:*
Իլիլի, տիլիլի:

## 5. Բ.

## ՊԱՐԵՐԳ ԹԸՌՆՈՑԻ

Զա՛ր՝ զը՛նգը, զա՛ր՝ զը՛նգը, թո՛ղ զընգա.
Պարենք գիշեր լուսնկայ։

*Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,*
Զա՛ր՝ զը՛նգը, զա՛ր՝ զը՛նգը, թո՛ղ զընգա.

*Ձիւնն եկեր՝ գետին նաշխեր ։*
Պարենք գիշեր լուսընկայ։

*Էլի պարը բոլորուէ ,*
*Եարըս մէջին մոլորուէ ։*

## 6.

## ԱՐՕՐ ԵՒ ՏԱՏՐԱԿ

**(Աշուն եւ Գարուն)**

*Արօրն ասաց տատրակ հաւքուն.*
*«Ինչի՞ կուլաս կուց կուց արիւն,*
*Երթայ լըցուի բարակ առուն»:*
*Տատրակն ասաց արօր հաւքուն.*
*«Գընաց գարուն, եկաւ աշուն,*
*Կըտրաւ ջըրիկ աղբիւրներուն,*
*Կըտրաւ խոտիկ ծաղիկներուն,*
*Կըտրաւ ձէնիկ կաքաւներուն.*
*Էնքան պիտի լամ երերուն,*
*Արիւն կաթէ իմ աչքերուն, —*
*Ես ի՞նչ անեմ իմ ձագերուն»:*
*Ասաց. «Դու մի՛ լա էս աշուն,*
*Չէ՞ վաղ կուգայ բարի գարուն,*
*Լոյս կը բացուի վեր աշխարհուն,*
*Դուռ կը բացուի խեղճիկներուն.*
*Ես քեզ կարնեմ իմ թեւքերուն,*
*Թըռնեմ բանձրիկ վեր ծառերուն,*
*Տանեմ, հանեմ վեր սարերուն,*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
133-2014
1641-57

Բուն կը դընեմ մէջ քարերուն,
Տուն կը շինեմ մէջ գաղերուն,
Երթիկ բանամ դէմ հով քամուն,
Թոնիր թաղեմ մէջ այրերուն,
Ծուխ կը հանեմ հետ ամպերուն,—
Մեր ցաւ կը տանք հարաւ քամուն»։

Գընաց աշուն, եկաւ գարուն,
Կաթէր ջըրիկ աղբիւրներուն,
Երթար լըցուէր բարակ առուն.
Աղբրանց-արիւն մէջ քարերուն,
Փունջ մանուշակ մէջ ձորերուն.
Կանաչ կարմիր գոյն գոյն ծաղկունք,
Դաշտերն ամէն էրունք, թռչունք.
Ջէնիկ կուգայ գառնիկ, մաքուն,—
Մեր աղրելիք վեր Աստըծուն։

# 7. Ա.

## ԾԱՆՐ ՊԱՐ

*Ալագեազ սարն ամպել ա.*
Վա՜յ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜.
*Աղբէր իր ձին թամբել ա։*
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան։
*Աղբէր իր ձին թամբել ա,*
*Եարոջ դըռնէն անցել ա։*
*Եարոջ դըռնէն անցել ա,*
*Ելե դաշտը՝ խաղցել ա։*
*Ելե դաշտը խաղցել ա,*
*Անձրեւ եկե՝ թըրջել ա։*
*Անձրեւ եկե՝ թըրջել ա,*
*Արեւ դարկե՝ չորցել ա։*
*Արեւ դարկե՝ չորցել ա,*
*Քան կարմիր վարդ բացել ա։*

## 7. Բ.

## ՈՒՍ ՊԱՐ

*Մեր դըռանը խընկի ծառ ,*
Գիւլու՛մ ջան,

*Ձեր դըռանը խընկի ծառ .*
Գիւլու՛մ ջան.

*Խընկենին ա բերել բար ,*
Գիւլու՛մ ջան.

*Իմ խորոտիկ , պըզտիկ եար :*
Գիւլու՛մ ջան,

*Մեր դըռանը խընկի ծառ ,*
*Նախշուն բըլբուլ վըրէն թառ .*
*Երթար ու գար , շորոր տար ,*
*Սիրուն եարին օրօր տար :*

## 7. Գ.

## ԹԵՒ ՊԱՐ

Շորորա, Անուշ, ջա՛ն, շորորա:
Անուշի շորորով ես կորայ:
*Վարդ եմ քաղել շաղերով,*
Շորորա, Անուշ, ջա՛ն, շորորա:
*Վեր եմ ղըրել մաղերով.*
Անուշի շորորով ես կարայ:
*Մի ջուխտ շամամ եմ կորցրել,*
Շորորա, Անուշ, ջա՛ն, շորորա:
*Իրա կանաչ թաղերով:*
Անուշի շորորով ես կորայ:

## 7. Դ.

## ՓԱԹՊԱՐ

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի
Յարիս տունը ծո՛վ լինի.
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Յարըս քամարով լինի:
Դէ՛ զանէք, զանէք, հողը հանէք,
Մեր_թշնամու դողը հանէք:

*Ծաղիկ ես ծաղկանց մէջին ,*
Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,

*Մի հատ ես աղջկանց մէջին .*
Եարիս տունը ծո՛վ լինի.

*Եա՛ր ինձ պարգևրես արա ,*
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,

*Իմ ընկեր մարդկանց մէջին ։*
Եարըս քամառով լինի:

Դէ՛, զանէք, զանէք, հողը հանէք,
Մեր թշնամու դողը հանէք:

*Արի մի փաթթպար խաղանք ,*
*Տընկող մընանք չը կաղանք .*
*Հարսանիքից ալիւրը*
*Մուղնու ուխտից վաղ աղանք ։*
*Իրար հետ բաղը գընանք ,*
*Ուտենք , խմենք , լիանանք ,*
*Թըշնամու աչքը հանենք ,*
*Մեր Աստըծուց գոհանանք ։*

## ՄԱՍՆ Բ.

## 1. Ա.

# ԳՈՒԹԱՆԵՐԳ ՎԱՐԱՆԴԱՅԻ

*Զի՛գ տու, քաշի՛, ա՛յ եզը,*
    Ա՛րա, հօ՛, հօ՛, ա՛րա, հօ՛.
*Լուծըդ մաշի, ա՛յ եզը.*
    Ա՛րա, հօ՛, հօ՛, ա՛րա, հօ՛:

*Աստուած պահէ քու տէրը,*
    Ա՛րա, հօ՛, հօ՛, ա՛րա, հօ՛,
*Մինն էլ տաշի, ա՛յ եզը:*
    Ա՛րա, հօ՛, հօ՛, ա՛րա, հօ՛:

*Մեր գութանը օղած ա,*
*Եզանց ուսը նօթած ա.*
*Վարէ՛ վարը, ա՛յ գութան,*
*Հազիւ խոփը ղօղած ա:*

*Շողքըն ընկաւ ծըմակին,*
*Աստուած կը տայ մըշակին.*
*Սուր գութանը ծիր գնաց,*
*Տէր-մըշակը քամակին:*

*Սերմէ՛, սերմէ՛, ա՛յ մըշակ,*
*Սո՛ւրբ ա, սո՛ւրբ ա քու փեշակ.*
*Մինը հազա՛ր տուր, Աստուած,*
*Քեզ ձէն կը տան տէր-մըշակ:*

## 1. Բ.

## ՔԱՂՀԱՆԵՐԳ.

*Քաղհան կանեմ հօ՛ բարով,*
Եար, նայ, նայ, նայ, նայ, նայ,

*Տարմա կեփեմ բիբարով,*
Սոնա եարըմ, նայ, նայ.

*Աշնան անփ լաւ օրեր,*
Եար, նայ, նայ, նայ, նայ, նայ,

*Բամպակ քաղեմ նուբարով:*
Սոնա եարըմ, նայ, նայ:

## Հ. Ա.

## ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ.

Կուժն առայ, եկայ առը,
Չը գըտայ Փիդան Նարը,
Ֆիդան Նարը ինձ տըւէք,
Չը քաշեմ ահ ու դարը:

Մեծ սարի հովին մեռնեմ,
Շէկ տըղի բոյին մեռնեմ.
Մի տարի ա չե՛մ տեսել,—
Տեսնողի աչքին մեռնեմ:

Բլբուլը դարի վերայ,
Խնձորը սարի վերայ.
Սիրած սիրածի տային,
Չոր գետնին՝ քարի վերայ:

## Հ. Բ.

## ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ.

*Սարէն եկաւ երկու մուխ,*
Բոյիդ մեռնեմ,

*Մինը հանգ ա, մինը ծուխ.*
Սոյիդ մեռնեմ.

*Երկու սիրուն երևաց,*
Բոյիդ մեռնեմ,

*Մինը չէկ ա, մինը թուխ:*
Սոյիդ մեռնեմ:

*Իմ եարն է շատ խորոտիկ,*
*Աչքերը նուան հատիկ.*
*Աստուած սիրէք, ադբըրտիք,*
*Ինձ տարէք եարիս մօտիկ:*

## 2. Գ.

## ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

*Գընա՜մ, գընա՜մ, հետիդ եմ,*
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Սարինօ, եա՛ր ջան,
Եարինօ, եա՛ր ջան.

*Կարմիր խնձոր գոտիդ եմ,*
Հա՛, Եարինօ, եար ջան,
Սարինօ եա՛ր ջան:

*Դու ինձ էս տեղ չես թողնի,*
*Որ տեղ երթաս մօտիդ եմ:*

*Ասպարանը քարոտ ա,*
*Սիրուն կանաչ արօտ ա.*
*Ուղիղ եօթը տարի ա,*
*Քոյրն ախպօրը կարօտ ա:*

## 3.

# ԱՆՏՈՒՆԻ

*Սիրտըս նման է էն փլված տըներ,—*
*Կոտրեր գերաններ, խախտեր է սըներ.*
*Բուն պիտի դընեն մէջ վայրի հաւքեր.*
*Երթամ՝ ձի թալեմ էն եղման գետեր.*
*Ընկիմ ձըկներու ծագերայըն կեր:*

Ա՜յ, տօ լա՜ն տընաւեր:

*Սև ծով մ'եմ տեսե, ապտակն էր բոլոր.*
*Ալին կը զարնէր, չէր խառնի յիրոր.*
*Էն որն է տեսե մէկ ծովն երկթաւոր,—*
*Անտունի սիրտն է պըղտոր ու մոլոր:*
*Ախ, եկէք մի՛ ընիք սըրտիք սևաւոր:*

Ա՜յ, տօ լա՜ն տընաւեր:

# 4. Ա.

## ԴՐԺՈՒԱԾ ՍԷՐ

*Գարուն ա, ձիւն ա արել,*
Վա՜յ, լէ, լէ, վա՜յ, լէ, լէ,
Վա՜յ, լէ, լէ, լէ, լէ՛.
*Իմ եարն ա ինձնից սառել։*
Ա՜խ, չորնա՜յ, վա՜խ, ա՜յ եար,
Չար մարդու լեզուն։

*Քամին փըչում ա պաղ պաղ,*
*Լերդ ու թոքս անում ա դաղ։*
*Եա՜ր, ինձ բէմուրատ արիր, —*
*Սէրըդ ինձնէ զատ արիր։*

# 4. Բ.

## ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

*Կայնել ես, կանչում էլ չես,*
Եա՛ր,
*Բոյէդ ամանչում էլ չես,*
Եա՛ր,

Եար, Եա;, Եայ, Եայ, Եայ, Եայ.
՛Նա՛յ, Եա՛յ, Եա՛յ, Եայ, Եայ, Եա՛յ.
*Եկար կըշտովս անց կացար,*
Եա՛ր,

*Տէր ես, ճանանչում էլ չես:*
Եա՛ր,

*Սև ամպը սարի գլխին,*
*Կաքաւը քարի գըլխին.*
*Զէ՞, իրար խօսք ենք տըւել.*
*Էն բարձր դարի գըլխին:*

## 4. Գ.

## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐԵՐԳ.

(Ծաղրերգ.)

*Խումար պառկե երեսբաց,*
Հո՛պ, հո՛պ, հոպպըտա՛, դըմբա՛.
*Դեղին կարպետ, բըմբուլ բարձ ։*
Հո՛պ, հո՛պ, հոպպըտա՛, դըմբա՛,
Հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է. հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է,
Հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է, հէ՛յ, հէ՛յ, լա՛ւնէ։

*Անուշ քընէ երես բաց,*
*Սահակն եկաւ խելք գընաց ։*

*Հաջոնց կալը բոլորպար,*
*Խումար մէջը կը խաղար ։*

*Ծամեր թալուկ իւր յետև,*
*Կը թըռվըռէր չատ թեթև ։*

*«Հաստա՛տ մընայ մեր հաջին,*
*Որ պահէ մեր նոր փեսին» ։*

*Գարնան բացուաւ նոր լալա,*
*Խումար բերաւ ջուխտ բալա ։*

*Աչքըդ լոյս, հաջի աղա,*
*Թոռներուդ հալաւ արա ։*

## 5. Ա.

## ԹԵԻ ՊԱՐ

*Սարը սարի նման չէ ,*
Հօ՛յ, օրօ՛ր, աղիճօ,

*Քարը քարի նման չէ .*
Հօ՛յ, օրօ՛ր, աղիճօ,

*Հարսն ու աղջիկ շատ տեսայ ,*
Հօ՛յ, օրօ՛ր, աղիճօ,

*Մէկն իմ եարին նման չէ ։*
Հօ՛յ, օրօ՛ր, աղիճօ,

## 5. Բ.

# ԹԸՌՆՈՑԻ ՊԱՐ

Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր։

*Վարդավառը գալիս ա,*
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,

*Ծաղիկը ցընծալիս ա.*
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր.

*Ա՛յ գիւղում կանչող աղջիկ,*
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,

*Ձէնըդ ծըլվըլալիս ա։*
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր։

## 6.

## ԳՈՒԹԱՆԵՐԳ ԼՕՌՈՒԱՅ ԳԱՒԱՌԻ

Հօ՛:—

*Օրհնեա՜լ է Աստուած,*
*Յիշեա՜լ է Աստուած:*

Հօ՛, հօ՛, եօ՛-ա՛, հօ՛ հօ՛ հօ՛, հօ՛, հօ՛.
Պուէ՛րէ, գումէս, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Ա՛ռ, հա՛ գումէս, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Տա՛ր, հա՛ գումէս, հօ՛, հօ՛յ, եօ՛:

*Լուսը լուսացաւ,*
Հա՛, հա՛,
Փա՛ռք քեզ, Տէ՛ր.
*Բարին շատացաւ:*

Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հօ՛, հօ՛յ.
Եօ՛-ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.
Պուէ՛րէ, գումէս, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛,
Ա՛ռ, հա՛ գումէս, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Տա՛ր, հա գումէս, հօ՛, հօ՛յ, եօ՛:

*Աղօթրան բացուաւ,*
Հա՛, հա՛,
Փա՛ռք քեզ, փա՛ռք.
*Մեր ժամը լցուաւ:*

Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, օ՛. հօ՛յ,
Եօ՛-ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.
Պուէ՛րէ, գու՛մէս, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.

Ա՛ռ, հա՛ գոմէշ, հօ՛, հօ՛յ, էօ՛-ա՛.
Տա՛ր հա՛ գոմէշ, հօ՛, հօ՛յ, էօ՛,
Պռէ՛րէ, ջա՛ն, հօ՛, պռօ՛րօ, հօ՛, պռի՛ւգի, ջան-
Հօռօլայ, հօռօլայ, քէ՛ ղուրբան.
Ծի՛մալ ջան, հօռօլայ, քե՛ մեռնիմ.
Լա՛չին ջան, հօռօլա՛յ, հօռօլա՛յ, հօռօլօ՛:
*Եղնարած քընի,*
Հա՛, հա՛.
Վե՛ր կացէք, գութա՛նուոր,
*Գութանը բանի:*
Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, օ՛, հօ՛յ,
Եօ՛-ա, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.
Պռէ՛րէ, գոմէշ, հօ՛ հօ՛յ, էօ՛-ա՛,
Ա՛ռ, հա՛ գոմէշ, հօ՛ հօ՛յ, էօ՛-ա՛.
Տա՛ր, հա՛ գոմէշ, հօ՛, հօ՛յ, էօ՛:
Պռէ՛րէ, ջա՛ն, հօ՛ պռօ՛րօ, հօ՛, պռի՛ւգի, ջա՛ն-
Հօռօլայ, հօռօլայ, քե՛ ղուրբան.
Ծի՛մալ ջան, հօռօլայ, քե՛ մեռնիմ.
Լա՛չին ջա՛ն, հօռօլա, հօռօլայ, հօռօլօ:
*Գալիս, գալիս է,*
Հա՛, հա՛.
Ա՛յ, ճըլկը՛ս, ճըլկը՛ս,
*Ամը լալիս է.*
Հէ՛ հէ՛, հէ՛, հէ՛, օ, հօ՛,
Եօ՛-ա՛. հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.
Պռէ՛րէ, գո՛մէշ. հօ՛, հօ՛յ, էօ՛-ա՛,

Ա՛ռ, հա՛ գոմէշ, հօ՛, հօ՛յ, էօ՛ - ա.
Տա՛ր, հա՛ գոմէշ, հօ՛, հօ՛յ, էօ՛:
Հօ՛յ, դո՛ւս եկաւ, հօ՛, ա՛,
Հօ՛յ, դո՛ւս եկաւ, հօ՛, ա՛,
Հօ՛յ, դո՛ւս եկաւ, հօ՛, ա՛.
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ.
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ.
Հօ՛յ, ռա՛ւել ա, հօ՛, ա՛,
Հօ՛յ, ռա՛ւել ա, հօ՛, ա՛,
Հօ՛յ, ռաւել ա, հօ՛, ա՛.
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ:
Հօ՛, դո՛ւս եկաւ, հօ՛:
*Օրհնեա՛լ է Աստուած,*
*Յիշեա՛լ է Աստուած:*
*Մաճկալը մաճին,*
Ա՛յ հորեւոր,
*Օղերն ականջին:*

Հօտաղն է լալի,
Քշի՛, ա՜յ լալիկ հօտաղ,
Միջակն է գալի։
Վարենք՝ չատանայ,
Տո՛կան ջան,
Տէրն ուրախանայ։
Թա՛փ տուր՝ թև արա,
Ա՜յ խոփ ու ձեւիչ,
Շուռ տուր՝ սև՛ւ արա։
Եւ այլն . . . :

## 7.

## ՍԻՓԱՆԱՅ ՔԱՋԵՐ

**Բայերգ .**

Լօ՛, լօ՛, լօ՛։ Սէգ Սիփանայ սարի վերան
Կլորիճներ չարալով գալիս են միանում.
Այնտեղ անահ որդիք, անպարտ բարձր լերան,
Զէնք ու զրահի են ընթանում։

Ինչո՞ւ վառւում են, գինւում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Վառ արիւն է նոցա քաջ սրտի մէջ եռում,

Թըռչում, անցում են ամպեր,
Քան Սիփանայ պինդ քամին,
Սըլանում են դէպ ի ցած,
Դաշտի մէջ է թշնամին,
Նա է վառում նորա վրէժն անմոռաց:
Գազանաբար վատթար թըշնամին,
Հատու սուսերը հանել,
Հայ իշխանին է սպանել,
Այս է վառում քաջերին:

Հայ որեարն էլ ափի կանգնած՝
Այժմ թշնամուն մահու, մարտի է կանչում,
Մեծ վրէժ արեան վրէժ է նա պահանջում.
Եւ թըշնամին պարտըւած,
Թողնում, փախչում սարէ սար,
Յետ է ձգում մեծ աւար:

Արիւն թափեցին, փոխանակ արեան՝
Արիւն քամեց ծարաւի սուսեր,
Սուրը յագեցաւ, յետ դըրին պատեան,
Ելնում են հիմայ սէգ Սիփանն ի վեր:
Սէգ Սիփանայ կանաչ գլխին
Հայ քաջերն անում են մեծ խնդում
Եւ ամպերի թանձրութեան միջին
Հըսկայ Սիփանն ամբողջ թընդում.
«Էլ մօտ չեն գայ մեզ թշնամիք,
Սուր տեսան մեր պողպատին»:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм.ССР
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՅԱՅՏԱԳԻՐ

## ՄԱՍՆ Ա.

**1.** **Կալերգ եւ Սայլերգ.**

*Երկուքէն մինչեւ ութաձայն երկսեռ խումբ եւ մեներգ՝ Պ. Հ. Մ.*

**2. ա.** **Հո՛յ, նազան իմ.** *Եռաձայն արական խումբ.*

**բ.** **Փափուրի.** *Քառաձայն երկսեռ խումբ.*

**3.** **Մոկաց Միրզա.** *Մեներգ դաշնակով՝ Կ. Վ.*

**4. ա.** **Առաւօտուն բարի լուս.**

*Մեներգ՝ Պ. Հ. Մ. եւ հնգաձայն երկսեռ խումբ.*

**բ.** **Արեւը կայնե կէսօր.** *Քառաձայն երկսեռ խումբ.*

**5. ա.** **Հինգ էծ ունիմ.** *Հնգաձայն երկսեռ խումբ.*

**բ.** **Ջա՛ր, գընգը.** *Քառաձայն երկսեռ խումբ.*

**6.** **Արօր եւ տատրակ.** *Մեներգ դաշնակով՝ Կ. Վ.*

**7. ա.** **Ալագեազ սարն ամպել ա.** *Եռաձայն իգ. փոքր խումբ.*

**բ.** **Մեր դրանը խնկի ծառ.** *Հնգաձայն իգական խումբ.*

**գ.** **Տօրօրա. Անուշ.** *Քառաձայն երկսեռ խումբ.*

**դ.** **Հով, հով, հով լինի.**

*Հնգաձայն երկսեռ խումբ եւ մեներգ՝ Կ. Վ.*

---

**ԾԱՆՕԹ.** Յայտագրիս բոլոր երգերը գրի առել եւ դաշնակել է **Կոմիտաս Վարդապետ** :

# ՄԱՍՆ Բ.

1. ա. Ձի՛գ տու, քա՛ջի, ա՛յ եղբ. — *Քառաձայն երկսեռ խումբ.*

   բ. Բաղխան կանեմ. — *Վեցաձայն երկսեռ խումբ.*

2. ա. Կուժն առայ, ելայ սարը. — *Քառաձայն երկսեռ խումբ.*

   բ. Սարէն եկա եկու մա՛խ. — *Վեցաձայն երկսեռ խումբ:*

   գ. Գնա՛, գնա՛, էնտեղ եմ. — *Վեցաձայն երկսեռ խումբ.*

3. Անտունի. — *Մեներգ դաշնակով Կ. Վ.*

4. ա. Գարուն ա, ձիւն ա արել. — *Եռաձայն եւ վեցաձայն երկսեռ խումբ.*

   բ. Կայնել ես, կռնչում էլ չես.

   գ. Խումար. — *Երկձայն խզական եւ վեցաձայն երկսեռ խումբ.*

5. ա. Սարը սարի նման չէ. — *Քառաձայն երկսեռ խումբ.*

   բ. Սոնա. — *Վեցաձայն երկսեռ խումբ.*

6. Գութաներգ. — *Մեներգ դաշնակով Կ. Վ.*

7. Սիփանայ քաջեր. — *Քառաձայն երկսեռ խումբ.*

---

Իւրաքանչիւր երգի կազմութիւնը—բանաստեղծութիւնը, եղանակը եւ դաշնաւորումը — նախ պէտք է մի առ մի վերլուծէ **Կոմիտաս Վարդապետ:**

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՔ

ՀԱՍՏԱՏԵԼԻ

## Հայ Երաժշտանոցին

### Տեարք

ԱՐԱՄ ՀԱԼԱՃԵԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՀԱՐԷՆՑ
ԱՐՍԷՆ ԱՐՍԷՆԵԱՆ
ԵԴՈՒԱՐԴ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ
ՄԱՐԹԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ
ՄԱՐՏԻԿ ԷՆՔՍԷՐՃԵԱՆ
ՍԻՍԱԿ ԱՇՃԵԱՆ
Sof. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄԵԱՆ

279

00124428

2013